# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/8 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 2-ին կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/8 պայմանագրում 2020 թվականի դեկտեմբերի 18-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| 1) Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 08.12.2020թ. N 1988-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/8 պայմանագրում և վճարման ժամանակացույցում կատարվել է 2020թ. համար հատկացված ֆինանսական միջոցների նվազեցում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 կետ: |
| 2) Փոփոխության առաջացման պատճառ | ՀՀ կառավարության 08.12.2020թ. N 1988-Ն որոշում, ինչպես նաև պատասխանատու ստորաբաժանման կողմից տրամադրված տեղեկատվություն: |
| Փոփոխության նկարագրություն | Պայմանագրից և Պայմանագրի բոլոր հավելվածներից հանվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Վարդենիկի կրթահամալիր>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայությանն առնչվող ամբողջ տեղեկատվությունը և Պայմանագիրը վերջինիս մասով 500 000 ՀՀ դրամի չափով լուծվել է: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.8 կետեր: |
| 3) Փոփոխության առաջացման պատճառ | Պայմանագրի հետագա կատարումն ապահովելու համար համապատասխան պայմանագրային դրույթի սահմանում: |
| Փոփոխության նկարագրություն | Պայմանագրի 7.13 կետից հետո լրացվել նոր 7.14 կետ: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 կետ: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

02.12.2020**թ. կնքված** N **ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ**-20/ 8 **գնման պայմանագրի**

ք. Երևան «18» դեկտեմբերի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Մառք>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Հակոբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 08.12.2020թ. N 1988-Ն որոշումը և նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայության մատուցման համար Կողմերի միջև 02.12.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/8 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.8 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

1.1.1 Պայմանագրի 4.1 կետում <<17 970 000 (տասնյոթ միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար)>> թվերը և բառերը փոխարինել <<17 470 000 (տասնյոթ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար)>> թվերով և բառերով:

1.1.2 Պայմանագրի 4.1 կետը լրացնել նոր 4.1.1 ենթակետով՝ հետևյալ խմբագրությամբ.

<<4.1.1 2020 թվականի համար վճարման ենթակա գումարը կազմում է 12 650 000 (տասներկու միլիոն վեց հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:>>:

1.1.3 Պայմանագրից և Պայմանագրի բոլոր հավելվածներից հանել ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Վարդենիկի կրթահամալիր>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայությանն առնչվող ամբողջ տեղեկատվությունը և Պայմանագիրը վերջինիս մասով 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով համարել լուծված:

1.1.4 Պայմանագրի 7.13 կետից հետո լրացնել նոր 7.14 կետ՝ հետևյալ խմբագրությամբ.

<<7.14 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:>>:

1.1.5 Պայմանագրի հավելված N 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է 7 (յոթ) էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ ՝ համաձայն Պայմանագրի Հավելված N 4-ի ՝
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<Մառք>> ՍՊԸ
ք. Երևան, Պ. Սևակի փող. 1
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 16062001019100
ՀՎՀՀ 01236957

Տնօրեն՝

_______________ Գ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված*
*02.12.2020թ. կնքված*
*N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/8 պայմանագրի*
*«18» դեկտեմբերի 2020թ. կնքված N 1 համաձայնագրի*

*<<Հավելված N2*
*02.12.2020թ. կնքված*
*N ՀՀՔԿ-ԳՀԾՁԲ-20/8 պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 9 | 50531140/15 | ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Մովսես Խորենացու անվան N10 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 750 000 | 750 000 |
| 11 | 50531140/18 | ՀՀ Գեղարքունիքի մարզի գ.Ն.Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի (նոր մասնաշենքերի) կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 750 000 | 750 000 |
| 12 | 50531140/19 | ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Վարդենիսի Հ.Համբարձումյանի անվան ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 450 000 | 450 000 |

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված `չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 13 | | | **Հանրակրթական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների մարզադահլիճների վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն, այդ թվում՝** | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 7 300 000 | 7 300 000 |
| | 13-1 | 50531140/31 | <<Երևանի Վ. Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 13-2 | 50531140/32 | <<Երևանի Ա. Երզնկյանի անվան հ. 118 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 13-3 | 50531140/33 | <<Երևանի Մ. Սարյանի անվան հ. 86 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 13-4 | 50531140/34 | <<Երևանի հ. 37 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 13-5 | 50531140/35 | <<Երևանի հ. 136 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 13-6 | 50531140/36 | Երևանի <<Սիլվա Կապուտիկյանի անվան հ. 145 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 13-7 | 50531140/37 | <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձորի Ղևոնդ Ալիշանի անվան N 27 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 400 000 | 400 000 |
| | 13-8 | 50531140/38 | <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վարդաբլուրի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 400 000 | 400 000 |
| | 13-9 | 50531140/39 | <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 400 000 | 400 000 |
| | 13-10 | 50531140/40 | ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Գետաշենի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 400 000 | 400 000 |
| | 13-11 | 50531140/41 | <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ակունք գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 400 000 | 400 000 |
| | 13-12 | 50531140/42 | ՀՀ Արմավիրի մարզի <<Շահումյանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 13-13 | 50531140/43 | ՀՀ Արմավիրի մարզի <<Փշատավանի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 13-14 | 50531140/44 | ՀՀ Արմավիրի մարզի <<Սարդարապատի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 13-15 | 50531140/45 | ՀՀ Արմավիրի մարզի <<Արմավիրի հ. 8 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 13-16 | 50531140/46 | ՀՀ Արմավիրի մարզի <<Վաղարշապատի Երվանդ Օտյանի անվան N 7 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 13-17 | 50531140/47 | ՀՀ Արմավիրի մարզի <<Ջանֆիդայի Է. Դաշտոյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 13-18 | 50531140/48 | ՀՀ Արմավիրի մարզի <<Արմավիրի N 6 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 13-19 | 50531140/49 | ՀՀ Արմավիրի մարզի <<Արագածի Մ.Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 13-20 | 50531140/50 | <<ՀՀ Վայոց Ձորի մարզի Շատինի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 400 000 | 400 000 |
| 14 | | | **Հանրակրթական ուսուցում իրականացնող ուսումնական հաստատությունների նոր մարզադահլիճների կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի քաղաքաշինական պարզ փորձաքննության ծառայություն, այդ թվում՝** | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 3 400 000 | 3 400 000 |
| | 14-1 | 50531140/13 | <<Երևանի Միքայել Նալբանդյանի անվան հ.33 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 300 000 | 300 000 |
| | 14-2 | 50531140/22 | <<Երևանի Ս. Խանզադյանի անվան հ.184 ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 300 000 | 300 000 |
| | 14-3 | 50531140/23 | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի <<ք. Վանաձորի Խ.Աբովյանի անվան թիվ 9 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 14-4 | 50531140/24 | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի <<ք. Վանաձորի Ծովակալ Իսակովի անվան թիվ 23 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 14-5 | 50531140/25 | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի <<Ստեփանավանի N1 վարժարան>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 14-6 | 50531140/26 | Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի <<Ագարակի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 14-7 | 50531140/27 | Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի <<Գագարինի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 14-8 | 50531140/28 | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի <<Արտիմետի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| | 14-9 | 50531140/29 | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ալագյազի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| | 14-10 | 50531140/30 | Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Թալինի ավագ դպրոց>> ՊՈԱԿ-ի | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 350 000 | 350 000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | - | - | - | - | - | - | - | - | - | - | - | 12 650 000 | 12 650 000 |

>>:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ ՝ համաձայն Պայմանագրի Հավելված N 4-ի
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<Մառք>> ՍՊԸ
ք. Երևան, Պ. Սևակի փող. 1
<<ՎՏԲ-Հայաստան Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 16062001019100
ՀՎՀՀ 01236957

Տնօրեն՝

_______________ Գ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ